# Kristonēakan vardapetutiwn handerdz araberēnov

## manr tghayots hamar

urn:nbn:de:hbz:5:1-11054

Goussen 2983

Goussen 2983

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

# ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

## ՀԱՆԴԵՐՁ ԱՐԱԲԵՐԷՆՈՎ

## ՄԱՆՐ ՏՂԱՑՈՑ ՀԱՄԱՐ




Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
-1870-

2983

# ՀԱՄԱՌՕՏ
# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ
# ՀԱՆԴԵՐՁ ԱՐԱԲԵՐԷՆՈՎ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ




Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

-1870-

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Համառօտեալ յումեմնէ բա-
նասիրէ համառօտաբար վասն
մանկանց անվարժից կամ թե-
թեւավարժից ։

Ի Թուականիս Հայոց այս
ՌՄԼԲ․ յունվարի Ա․

Տպագրեցեալ 'ի տպարանի
Պետրոսեան Ստեփաննոսի ․
Եւ այժմ Թարգմանեալ 'ի
Հայերէն լեզուէ Յարաբա-
ցի լեզու ձեռամբ անարժան
եւ մեղաթաթաւ տիրացու
Գասպարիորդի Յովսեփու ոս-
կերիչ Տէր Խաչատուրեան,
յօգտութիւն Լուսաւորչա-
դաւանք մանկանց Արաբից
'ի մայրաքաղաքին Բերիոյ․ յա-
մի տեառն 1831․ մարտի 23։

Կամիս լինել դու քրիստո-
նեայ, զայս 'ի միտ քում հա-
ւաքեա ։

# * تعليم المسيحى *

مجموع من احد محب الفطنة
مختصر لاجل الاولاد الغير متعلمين
ام القليلى العلم

فى تاريخ الارمنى سنة ١٢٣٢
فى غرة كانون الثانى

قد طبع فى مطبعة استفانوس
البطرسى والان قد تترجم من اللغة
الارمنية الى لغة العربية على يد الفقير
الغير مستحق المغموس فى الخطايا
الشماس يوسف ابن الشماس كسبار
ابن دير خجدور السايغ لمنفعة اولاد
العرب المقتديين بالمنور ( اعنى به
غريغوريوس ) فى مدينة حلب فى
سنة مسيحية ١٨٣١ فى ٢٣ من ادار

ان شيت مسيحيا" انت تكون هذا
فى عقلك فليكون مصون

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՐՑ

1 Դու Քրիստոնեա՞յ ես։

### ՊԱՏԱՍԽԱՆ

Այո՛, քրիստոնեայ եմ։

2 Հ. Ո՞րն է նշանն քրիստոնէից։

Պ. Սուրբ և պատուական խաչն Քրիստոսի։

3 Հ. Խաչակնքեա՛ զի տեսանիցեմ թէ որպէս խաչակնքես։

Պ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

4 Հ. Ո՞վ ստեղծ զքեզ։

Պ. Աստուած ամենակարողն։

5 Հ. Ի՞նչու համար ըստեղծ։

Պ. Այն համար որ զինքը ճանաչեմ, իր կամքը կատարեմ, և վերջապէս արքայութեանն արժանաւոր ըլլամ։

6 Հ. Ո՞րն է Աստուած։

Պ. Ի՛ ստեղծող երկնի և երկրի երևելեաց և աներև-

## * الجز الاول *

(سوال)

١ (آمسيحى انت)

(جواب)

نعم مسيحى

٢ س. ما هى علامة المسيحيين

ج. هى اشارت صليب المسيح المقدس والمكرم

٣ س. ارسم اشارت الصليب لانظر كيف ترسمه

ج. بسم الاب والابن والروح القدس

٤ س. من خلقك

ج. الله الكلى القدرة

٥ س. لاى شى خلقك

ج. لاجل ذلك كى له اعرف وارادته اتمم واخيرا" استحق ان ارث ملكوته

٦ س. اى شى هو الله

ج. هو خالق السما والارض

ւութիւն .

7 Հ. Աստուած քանի՞ է .

Պ. Մի է .

8 Հ. Աստուածային անձինք քանի՞ք են .

Պ. Երեք են .

9 Հ. Երեք անձանց անուանքն զի՞նչ են .

Պ. Միոյն անունն Հայր է . երկրորդին Որդի է . և երրորդին Հոգի Սուրբ .

10 Հ. Ուրեմն Հայր Աստուած է .

Պ. Այո, Աստուած է .

11 Հ. Որդին Աստուած է .

Պ. Այո, Աստուած է .

12 Հ. Հոգին Սուրբ Աստուած է .

Պ. Այո, Աստուած է .

13 Հ. Ապա ուրեմն երեք Աստուածք են :

Պ. Ոչ, երեք Աստուածք չեն, այլ մի Աստուած և երեք անձինք .

المنظورات والغير المنظورات

٧ س . الله كم واحد

ج . واحد

٨ س . اقانيم الالهية كم واحد هم

ج . ثلاثة

٩ س . الثلاثة اقانيم ماهى اساميهم

ج . الواحد اسمه الاب والثانى الابن والثالث روح القدس

١٠ س . فاذا الاب هو الله

ج . نعم هو الله

١١ س . الابن هو الله

ج . نعم هو الله

١٢ س . الروح القدس هو الله

ج . نعم هو الله

١٣ س . لعل هم ثلاثة الهة

ج . ليس هم ثلاثة الهة بل اله واحد وثلاثة اقانيم

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՀԱՐՑ

1 Այս երեք անձանց ո՞ր անձըն մարդացաւ։

Պ. Որդւոյ անձն մարդացաւ։

2 Հ. Հայր ևս մարդացա՞ւ։

Պ. Ո՛չ։

3 Հ. Հոգին Սուրբ ևս մարդացա՞ւ։

Պ. Ո՛չ։

4 Հ. Ապա ո՞ր անձն մարդացաւ։

Պ. Մի միայն որդւոյ անձըն մարդացաւ։

5 Հ. Մարդացաւ զի՞նչ ըսել է։

Պ. Մեզ նման կատարեալ մարդ եղաւ ըսել է. մարմին առնելով ՚ի մաքուր յարենէն կուսին Մարիամու։

6 Հ. Մարմին առնողն ո՞վ է։

Պ. Բանն Աստուած, որ է միածին Որդին։

7 Հ. Զի՞նչ է առեցեալն։

Պ. Հոգի, միտք, և մարմին որք են մարդկայինք։

8 Հ. Զիա՞րդ առողն և

## * الجز الثانى *

( سوال )

١ اى اقنوم تانس من هذه الثلاث افانيم

ج . اقنوم الابن تانس

٢ س . هل الاب ايضاً تانس

ج . كلا

٣ س . هل الروح القدس ايضاً تانس

ج . كلا

٤ س , الا اى اقنوم تانس

ج . فقط وحده اقنوم الابن تانس

٥ س . كلمة تانس ما هى تاويلها

ج . تاويلها صار انساناً تاماً مثلنا باخذه جسداً من دم سيدتنا مريم العذرا الزكى

٦ س. المتخذ الجسد من هو

ج . كلمة الله الذى هو الابن الوحيد

٧ س . ما هو الماخوذ

ج . روحاً وعقلاً وجسماً الذين هم للبشر

٨ س . فكيف الاخذ والماخوذ

աւեցեալն լինին մի անձն և
մի բնութիւն .

Գ. Քանզի բանն Աստուած
այնպէս միաւորեաց ընդ ան-
ձին և բնութեան իւրում
զմարդկութիւնն որպէս մար-
մին մեր միաւորեալ է ընդ
հոգւոյ մերում, և մի բնու-
թիւն եղեալ է ընդ նմա ա-
ռանց շփոթման, այնպէս և
մարդկութիւնն միաւորեցաւ
ընդ անձին և ընդ բնութեան
բանին Աստուծոյ և մի Աս-
տուածամարդկային բնու-
թիւն եղեւ ընդ նմա առանց
շփոթման, և առանց փոփոխ-
ման :

9 Հ. Յիսուս ինչ ըսել է :

Գ. Փրկիչ ըսել է . վասն
զի մեզի սատանայի ձեռքէն
ու դժոխքի տանջանքներէն
փրկեց :

10 Հ. Քրիստոս ինչ ըսել է :

Գ. Քրիստոս օծեալ ըսել
է . և օծեալ կ՚ըսուի . վասն զի
մարդկային բնութիւնը Քրի-
ստոսի աստուածութեանն
հետ միաւորուելով օծուե-
ցաւ :

11 Հ. Տէրն մեր Յիսուս
Քրիստոս ո՞ր օր ծնաւ :

يكونان اقنوم واحد وطبيعة واحدة

ج . لان كلمة الله هكذا اتحد
الناسوتية مع اقنومه وطبيعته . كمثلما
جسمنا متحدا" مع روحنا وصايرا"
طبيعة واحدة معه بغير اختلاط . هكذا
والناسوت اتحد مع اقنوم وطبيعة كلمة
الله . وصار معه طبيعة الهية وانسانية
بغير اختلاط وغير تبديل

٩ س . كلمة يسوع ما هى تاويلها

ج . تاويلها مخلص لانه خلصنا
من يدى الشيطان ومن عذابات
الجحيم

١٠س . كلمة مسيح ما هى تاويلها

ج . المسيح تاويلها ممسوح ويقال
ممسوح لانه باتحاده طبيعة الناسوتية
مع لاهوت المسيح انمسح

١١س . سيدنا يسوع المسيح فى
اى يوم ولد

Պ. Յունվարի վեցերորդ օրը:

12 Հ. Որմէ՞ ծնաւ.

Պ. Մարիամ Ս. կուսէն ինչպէս վերն ըսուեցաւ.

13 Հ. Մարիամ Աստուածածին կոյս մնա՞ց ծնանելէն ետքն ալ.

Պ. Այո, վասն զի յղութիւն անսերմն էր, և ծնունդն անապական, ուստի յետ ծնանելոյն կոյս մնաց:

14 Հ. Քրիստոս ըստ Աստուածութեանն ծնեա՞լ էր 'ի հօրէ:

Պ. Այո, ծնեալ էր.

15 Հ. Ըստ մարդկութեանըն ծնա՞ւ 'ի մօրէ.

Պ. Այո, ծնաւ.

16 Հ. Առաջին ծնունդն ինչպէս էր.

Պ. Անժամանակ և անմարմին ծնունդ առանց մօր.

17 Հ. Երկրորդ ծնունդն ինչպէս էր.

Պ. Ժամանակաւ, և մարմնով ծնունդ առանց հօր:

18 Հ. Քրիստոս քանի տարի շրջագայեցաւ 'ի վերայ երկրի:

ج . فی الیوم السادس من شهر کانون الثانی

١٢س . ممن ولد

ج . من القدیسة مریم العذرا کما قد قیل اعلاه

١٣س . هل والدة الاله مریم بقیت عذرا بعد الولادة

ج . نعم . لان بغیر زرع حبلت وبغیر فساد ولدت . فلاجل ذلك بقیت عذرا بعد الولادة

١٤س . هل كان المسیح حسب اللاهوت مولودا" من اب

ج . نعم كان مولود

١٥س . هل حسب الناسوت ولد من ام

ج . نعم ولد

١٦س . اول ولادة كیف كانت

ج . بغیر زمان وبغیر جسم میلادا" بغیر ام

١٧س . والمیلاد الثانی كیف كان

ج زمانیا" وبجسد میلادا" بغیر اب

١٨س . المسیح كم سنة استمر دایرا" علی الارض

Պ. Երեսուն և երեք տարի ու կէս։

19 Հ. Այնքան ժամանակ ի՞նչ ըրաւ։

Պ. Ճշմարտութեան ճանապարհը սորվեցուց իրեն հետեւողներուն։

20 Հ. Այդ ժամանակը լըմննալէն վերջն ի՞նչ ըրաւ։

Պ. Կամաւ չարչարուեցաւ խաչուեցաւ, ու մեռաւ մեզ համար։

21 Հ. Ինչո՞ւ մեռաւ։

Պ. Մեր փրկութեա՞ն համար։

22 Հ. Ի՞նչի վերայ մեռաւ։

Պ. Խաչափայտին վերայ։

23 Հ. Եթէ Քրիստոս Աստուած էր, ի՞նչպէս մեռաւ։

Պ. Ոչ ասեմ թէ աստուածային բնութեամբն մեռաւ. այլ առեցեալ մարմնովն. այսինքն անճառելի միաւորութեամբն. վասն որոյ և ասի Աստուած խաչեցաւ և մեռաւ։

24 Հ. Քրիստոսի մահուանէն վերջը մարմինն ի՞նչ ըրին։

Պ. Աստուածութեը միաւորե" մարմինը Խաչէն իջեցնելով նորափոր գերեզմանի մէջ դրին։

ج . ثلاثة وثلاثون سنة ونصف

١٩س . وفى هل قدر زمان ماذا فعل

ج . قد علم لمتبعيه طريق الحق

٢٠ س . فبعد نهاية ذلك الزمان ماذا فعل

ج . بارادة تعذب صلب ومات لاجلنا

٢١ س . لماذا مات

ج . لاجل خلاصنا

٢٢ س . على اى شى مات

ج . على خشبة الصليب

٢٣ س . ان كان المسيح اذا هو الها" فكيف مات

ج . ليس اقول انه بطبيعة اللاهية قد مات . بل بجسمه المتخذ اعنى باتحاد الغير موصوف . فلاجل ذلك يقال ان الله قد صلب ومات

٢٤ س . بعد موته ماذا فعلوا بجسد المسيح

ج . جسده المتحد مع لاهوته بتنزيله عن الصليب وضعوه فى قبر منحوت جديد

25 Հ. Քանի՞ օր մնաց գերեզմանին մէջ:

Պ. Մարմնով երեք օր գերեզմանը մնալով, հոգւովն իջաւ դժոխքն ու բանտի մէջ եղած ոգիները ազատեց:

٢٥ س . كم يوم بقى فى القبر

ج. بالجسد بقى ثلاثة ايام فى القبر بالروح انحدر الى الجحيم وخلص الارواح الذين كانوا فى السجن

---

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՐՑ

1 Եկեղեցի ի՞նչ ըսել է:

Պ. Եկեղեցի ըսել է ժողով ամենայն հաւատացելոց քրիստոնէից որք մկրտեալք են յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

2 Հ. Զի՞նչ է խորհուրդ եկեղեցւոյ:

Պ. Է՛ ազատութիւն հոգեւոր:

3 Հ. Քանի՞ք են:

Պ. Եւթն են:

4 Հ Որո՞նք են:

Պ. Մկրտութիւն. Դրոշմ. Հաղորդութիւն. Ապաշխարութիւն. Ձեռնադրութիւն. Պսակ. եւ Վերջին օծումն:

5 Հ. Մկրտութիւնն ի՞նչ է:

Պ. Լուացումն արտաքին

## الجز الثالث

### (سوال)

١ما هى تاويل كلمة كنيسة المقدسة

ج. الكنيسة هى اجتماع كافة المسيحيين المومنين الذين هم معتمدين باسم الاب والابن والروح القدس

٢ س. ما هو سر الكنيسة

ج. هو خلاص روحانى

٣ س. كم هم الاسرار

ج. هم سبعة

٤ س. ما هم

ج. المعمودية . الوسمة . شركة القربان . التوبة . الرسامة . الاكليل . ومسحة الاخيرة .

٥ س. ما هى المعمودية

ج. هى اغتسال خارج الجسد

մարմնոյ և մաքրումն ներքին հոգւոյ, և ազատութիւն յակըզբնական մեղաց ։

6 Հ. Դրոշմն ինչ է ։

Պ. Ա՛ հաստատութեան խորհուրդ ՚ի հաւատս Քրիստոսի, և կնիք ճանաչման, որ կը տրուի մարդը զօրացունելու և Քրիստոսի զինուոր ըլլալու համար ։

7 Հ. Հաղորդութիւնն ինչ է ։

Պ. Ա՛ մարմին և արիւն Տեառըն մերոյ Յիսուսի Քրիստոսի և կերակուր հոգևոր. որ կուտայ մեզ յաւիտենական կեանք ժառանգելու համար ։

8 Հ. Ապաշխարութիւնն ինչ է ։

Պ. Ապաշխարութիւնն է զղջցեալ չարիքն լալ, անգամ մ՚ալ չգործել, կամ դարձումն ՚ի մեղաց և գտանել վերստին զկորուսեալ շնորհսն ։

9 Հ. Ձեռնադրութիւնն ինչ ։

Պ. Ձեռնադրութիւնն է հոգևոր իշխանութիւն, զոր կուտայ եպիսկոպոսը քահանայ ըլլալու անձին ։

10 Հ. Պսակն ինչ է ։

وتنقية داخل الروح وخلاصاً من الخطية الاصلية

٦ س . ما هى الوسمة

ج . هى سر التثبيت فى ايمان المسيح وختم معرفته . الذى يعطى الى تقوية الانسان ويكون جندياً للمسيح

٧ س . ما هو شركة القربان

ج . هو جسد ودم ربنا يسوع المسيح وطعام روحانى الذى يمنحنا ان نرث حياة الابدية

٨ س . ما هى التوبة

ج . هى الاسف على الشرور الماضية ولا يعود يفعلها . ام الرجوع عن الخطية ويعاود فيجد النعمة التى اضاعها

٩ س . ما هو الرسامة (ياعنى وضع الايادى)

ج . الرسامة هى رياسة روحانية التى يمنحها الاسقف لذات الصاير كاهن

١٠ س . ما هو الاكليل

Պ. Է խորհուրդ եկեղեցւոյ. որ 'ի բաց բառնայ զշնութիւն և զպոռնկութիւն, և անլուծանելի կապանօք կապէ զայրն և զկինն ընդ իրեարս վասն փրկութեան իւրեանց ծնանիլ և սնուցանել զորդիս 'ի պաշտօն Աստուծոյ։

11 Հ. Վերջին օծումն ինչ է։

Պ. Վերջին օծումն է եօթներորդ խորհուրդ եկեղեցւոյ, և այցելութիւն հիւանդաց ալ կ'ըսուի, զոր Հայաստանեայց սուրբ Եկեղեցին կը կատարէ 'ի ձեռն քահանայից աղօթիւք և ձեռք դնելով հաւատացեալ հիւանդաց վրայ սուրբ խաչիւ և սբ աւետարանաւ համդերձ։

12 Հ. Առաքինութիւնն ինչ է։

Պ. Է ունակութիւն մտաց զոր ընդունի հոգին, և լինի բարեգործ։

13 Հ. Քանի՞ք են։

Պ. Եօթն են։

14 Հ. Որո՞նք են։

Պ. Հաւատք, յոյս, սէր, որ գերբնական առաքինութիւն են, արիութիւն, արդա-

ج. هو سر الكنيسة الذى يزيل الزنا والفسق ويربط الرجل والمراة ببعضهم بعضا" برباط عديم الانحلال لاجل خلاصهم كى يلدوا و يربوا بنينا" لاجل عبادة الله

١١س. ما هى مسحة الاخير

ج. مسحة الاخير. سر الكنيسة السابع .وايضا" يقال زيارة المرضا. كى الكنيسة المقدسة الارمنية نكملها بيد الكهنة بالصلاه و بوضع الايادى على المرضا المومنين بالصليب المقدس وبالانجيل المقدس

١٢س. ما هى الفضيلة

ج. هى رغبة العقل التى تقبله الروح وتصير فعالة الصالح

١٣س. كم هم الفضايل

ج. هم سبعة

١٤س. اياهم كى استمع كيف هم

ج. الايمان . الرجا . المحبة . فضايل عال الطبايع . القوة . البر . الفطنة . والعفة . فضايل طبيعى

րութիւն, խոհեմութիւն և ողջախոհութի՟ որ բնական են։

15 Հ. Հաւատքն ի՞նչ է։

Պ. Է պարգեւ մի հեղեալ 'ի մեզ յԱստուծոյ, որով կը ճանաչեմք զԱստուած ամենազօր և ստեղծիչ։

16 Հ. Յոյսն ի՞նչ է։

Պ. Յոյսն է ստոյգ ակնկալութիւն հանդերձեալ բարեացն որ տալոց է Աստուած յաւուրն հատուցման։

17 Հ. Սէրն ի՞նչ է։

Պ. Է ունակութիւն մըտաց սրտի որով սիրեմք զԱստուած վասն բարերարութեան և զընկերն մեր հաւասար մեզ վասն Աստուծոյ։

18 Հ. Արիութիւնն ի՞նչ է։

Պ. Արիութիւնն է որ ընդդէմ լինի փորձութեանց աշխարհին, և դժուարին կրիցն հանդուրժել։

19 Հ. Արդարութիւնն ի՞նչ է։

Պ. Է հաւասարաբաշխութիւն 'ի հոգին և 'ի մարմին և ոչ իւրացուցանել զինչսն այլոց ինքեան։

20 Հ. Խոհեմութիւնն ի՞նչ է։

١٥س . ما هو الايمان

ج . هى موهبة مسكوبة علينا من الله كى بها نعرف الله كونه كلى القدرة وخالق

١٦س . ما هو الرجا

ج . الرجا هو انتظار حقيقى للخيرات المزمعة التى يمنحنا الله اياها فى يوم المكافات

١٧س . ما هى المحبة

ج . هى رغبة العقل التى حقا بها نحب الله لاجل احسانه ونحب قريبنا مثل نفوسنا لله

١٨س . ما هى التقوة

ج . هى احتمال تجارب العالم والصبر على الشدايد الصعبة

١٩ س . ما هو البر

ج . هى موهبة عمومية فى الروح والجسد ولا يبغى اشيا غيره اليه

٢٠ س . ما هى الفطنة

Պ. Է՝ ընտրութիւն առնել 'ի մէջ բարւոյ և չարի՝ չխաբել զոք և չխաբիլ յումեքէ:

21 Հ. Ողջախոհութիւնն ի՞նչ է:

Պ. Է՝ 'ի բաց մերժել յինքենէ զամենայն մարմնական հեշտութիւնս և ցանկութիւնս որք պատահին:

22 Հ. Քանի՞ք են պարգեւք հոգւոյն սրբոյ:

Պ. Եօթն են. այսինքն իմաստութիւն. հանճար. խորհուրդ. զօրութիւն. գիտութիւն. աստուածպաշտութիւն, և երկիւղ Աստուծոյ:

23 Հ. Քանի՞ք են գործք ողորմութեան որք 'ի յիշատակ գան յաւուրն դատաստանի:

Պ. Եօթն են. այսինքն կերակրել զքաղցեալս, արբուցանել զծարաւեալս, զգեցուցանել զմերկս, ժողովել զօտարս, տեսանել զհիւանդս, այց առնել բանտարկելոց. թաղել զմեռեալս, այսոքիկ են մարմնաւոր ողորմութիւնք:

24 Հ. Գո՞ն եւս հոգեւոր ողորմութիւնք:

Պ. Այո, կան այլ եւս եօ-

ج . هو الانتخاب ما بين الخير والشر لا يضل احد ولا يضل من احد

٢١ س . ما هى العفة

ج . هو الامتناع من الذات عن كافة لذات وتنعمات الجسدانية التى تحدث

٢٢ س . كم هم مواهب الروح القدس

ج . هم سبعة اعنى بهم الحكمة . الفقهة . المشورة . القوة . المعرفة . عبادة الله . ومخافة الله .

٢٣ س . كم هى افعال الرحمة التى ياتى ذكرها فى يوم الدينونة

ج . سبعة اعنى بهم اطعم الجياع . اسقى العطاش . اكسى العريان . ايوى الغربا . زيارة المرضى . افتقاد المحبوسين . ادفن الموتى . هذه هى افعال الرحمات الجسدانيات

٢٤ س . هل يجد ايضا" افعال رحمات روحانيات

ج . نعم موجود غيرهم سبعة اخر

թըն հոգեւոր ողորմութիւնք այսինքն խրատել զերկմիտսն, առաջնորդել տգիտաց. կըշտամբել զմեղաւորս. թողուլ զպարտս. յանձն առնուլ ըզվիշտս աղաչել զԱստուած վասըն կենդանեաց և մեռելոց. և վասն մեղաց։

25 Հ. Քանի՞ք են օրինաց բանք, և որո՞ւ ձեռքով տուաւ Աստուած զանոնք։

Պ. Տասն են բանք օրինացըն Աստուծոյ, և Մովսէսի ձեռքով տուաւ Սինայ լեռան վրայ։

26 Հ. Որո՞նք են տասն օրէնքները։

Պ. Առաջինն՝ ես եմ տէր Աստուած քո. և մի եղիցի քեզ այլ աստուած բաց յինէն. և մի գիցես զանուն Աստուծոյ քոյ 'ի վերայ սնոտեաց։

Երկրորդն՝ մի արասցես քեզ կուռս ըստ ամենայնի նմանութեան, յերկինս 'ի վեր և յերկիր 'ի վայր։

Երրորդն՝ յիշեա զի սըրբեսցես զօր շաբաթուն (ըստ մեզ կիւրակէ։)

Չորրորդն՝ պատուեա ըզհայր քո և զմայր։

رحمات روحانيات اعنى بهم عظ المرتابين . اهدا الاغبيا . توبيخ المصرين على الخطايا. عتاق الدين. اخذ المشقات على الذات . التوسل لله لاجل الاحيا والاموات . ولاجل الخطايا .

٢٥ س . كم هى كلمات الناموس وعلى يد من الله اعطاهم

ج . هم عشرة كلمات ناموس الله وعلى يدى موسى قد اعطوا فى طور سينا

٢٦ س . اياهم العشرة وصايا

ج . الاولى انا هو الرب الهك فلا يكن لك الها" غيرى ولا تضع اسم الهك على الاباطيل

الثانية لا تصنع لك وثن حسب كافة التماثيل ما فى السما من فوق وما فى الارض من اسفل

الثالثة اذكر نهار السبت كى تطهره (الذى هو عندنا الاحد)

الرابعة اكرم اباك وامك

Հինգերորդն՝ մի սպանաներ։

Վեցերորդն՝ մի շնար։

Եօթներորդն՝ մի գողանար։

Ութերորդն՝ մի սուտ վկայեր ընկերէ քումմէ։

Իններորդն՝ մի երդնուր սուտ յանուն տեառն Աստուծոյ քոյ։

Տասներորդն՝ մի ցանկանար կնոջ ընկերի քո. և մի տան նորա, և մի ընչից նորա. և մի ամենայն իրաց նորա որք նորա իցեն։

الخامسة لا تقتل

السادسة لا تزني

السابعة لا تسرق

الثامنة لا تشهد بالزور على صاحبك

التاسعة لا تحلف كاذبا على اسم الرب الهك

العاشرة لا تشتهي امراة قريبك ولا بيته ولا امواله ولا كافة مقتناه الذي هو له

27 Հ. Մեղքը քանի տեսակ է։

Պ. Երկու, այսինքն սկզբնական, և ներգործական։

٢٧ س. كم جنس هي الخطية

ج. هي جنسين اعني اصلية وفعلية

28 Հ. Ո՞րն է սկզբնականը։

Պ. Սկզբնական մեղքը մեր Ադամ նախահայրէն մնացած է ամենուս ալ որ մկրտութեամբ կը ջնջուի։

٢٨ س. ما هي خطية الاصلية

ج. فالاصلية هي مستمدة معنا جميعنا منذ ابينا ادم وهي التي تمحى بالمعمودية

29 Հ. Ո՛րն է ներգործականն։

Պ. Ներգործական մեղքն է որ մկրտութենէ վերջը կըգործեմք մեր կամքը։

٢٩ س. ما هي خطية الفعلية

ج. هي خطية الفعلية الذي بعد المعمودية نفعلها ارادتنا

30 Հ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է։

Պ. Երեք, այսինքն, մա-

٣٠ س. كم جنس الخطية الفعلية

ج. ثلاثة اعني هم مميتة وعرضية

հացու, ներելի, և փոշետե-ւակ։

31 Հ. Մահացուն ինչ է։

Պ. Մահացու է այն մեղքը որ գործողը կը մահացունէ։

32 Հ. Ներելին և փոշետեւակին ինչ է։

Պ. Այն անտանկ մեղքերն են որ եթէ մարդ մը գործէ և մոռանայ. կամ թէ թեթեւապէս կընէ զապաշխարանքն կամ ինչպէս կատարելու ժամանակ չունենայ կը թողուի։

33 Հ. Մահացու մեղքերը քանի՞ են։

Պ. Եօթն են. այսինքն հպարտութիւն. նախանձ. բարկութիւն. ծուլութիւն. ագահութիւն. որկրամոլութիւն. բղջախոհութիւն։

34 Հ. Աստուած ո՞ր մեղաց համար վրէժխնդիր է։

Պ. Աստուծոյ վրէժխնդրութեանը տակն ինկող մեղքերն են ասոնքն. անմեղ ըսպանութիւն. արուագիտութիւն. զրկանք աղքատաց, հատանել զվարձս մշակաց։

35 Հ. Քանի՞ք են առաքինութիւնք ընդդէմ սոցա,

ودون طفيفة

٣١ س. ما هى الخطية المميتة

ج. الخطية المميتة هى التى تهلك فاعلها

٣٢ س. ما هى العرضية ودون الطفيفة

ج. هولاهما ان كان انسان احد يفعل منهما وينسى ام يقضى القانون بالسهولة ام لم يجد وقت يتممه كاملاً فالله يسمح

٣٣ س. كم هى الخطايا المميتة

ج. هى سبعة اعنى الكبريا. الحسد. الغضب. الكسل. الطمع. الشراهة. والزنا.

٣٤ س. ما هى الخطايا التى يطلب الله منها الانتقام

ج. الخطايا التى تقع تحت انتقام الله هم القتل بغير ذنب. ومضاجعة الذكور. وظلم المساكين. وقطع اجرة الفعلة.

٣٥ س. كم هى الفضايل التى تضادهم

Պ. Եւթն են. այսինքն, խոնարհութիւն ընդդէմ հպարտութեան. բարեհաճութիւն ընդդէմ նախանձու. հեզութիւն ընդդէմ բարկութեան. առատաձեռնութի՛ւն ընդդէմ ագահութեան. արիութիւն ընդդէմ ծուլութեան. պահեցողութիւն ընդդէմ որկրամոլութեան. ողջախոհութի՛ւն ընդդէմ բղջախոհութեան.

ج . هى سبعة اعنى التواضع ضد الكبريا . ارادة الخير ضد الحسد . الوداعة ضد الغضب . السخا ضد الطمع النشاط ضد الكسل. القناعة ضد الشراهة والعفة ضد الزنا

36 Հ. Մեղքն քանի՞ բանիւ կը գործուի.

٣٦ س . الخطايا بكم شى تصطنع

Պ. Երեք. այսինքն խորհրդով, բանիւ, և գործով։

ج . بثلاثة اعنى بالفكر والقول والفعل

37 Հ. Խորհրդով, բանիւ և գործով ի՞նչպէս կը մեղանչեմք.

٣٧ س . كيف نخطى بالفكر . والقول . والفعل

Պ. Խորհրդով մեղանչել կոչի յորժամ 'ի սրտի մերում չար խորհիմք. բանիւն այն է երբ՝ որ կը հայհոյեմք. գործովն է որ ձեռօք կամ ոտիւք կատարեմք, և 'ի գլուխ ածեմք։

ج . الخطية بالفكر هى تدعى عند ما نفكر شراً فى قلوبنا والخطية بالقول هى عند ما نصعد من فمنا الشتايم والخطية بالفعل هى عند ما بالايادى والارجل تتممها الى الغاية

38 Հ. Մի՞ միայն զքրիստոնէական հաւատոյ զորպիսութիւնն ճանաչելով փրկութեան հասանիմք թէ ոչ.

٣٨ س . هل فقط بعرفنا كيفية ايمان المسيحى نحصل على الخلاص ام لا

Պ. Մի միայն ճանաչողութեամբ ոչ հասանիմք.

ج . فقط بالمعرفة ليس نحصل على الخلاص

39 Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Վասն զի ինչպէս որ առաքեալն ալ կըսէ հաւատքն առանց գործոց մեռեալի պէս է։

40 Հ. Բարի գործերը ո՞րոնք են։

Պ. Աղօթք, պահք, եւ ողորմութիւնք։

41 Հ. Գիտե՞ս զտէրունական աղօթքն։

Պ. Այո՛, գիտեմ։

42 Հ. Ասա՛ տեսնեմ։

Պ. Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո. որպէս յերկինս և յերկրի՝ զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք ՚թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն.

43 Հ. Գիտե՞ս ՚ի դէմս սրբուհւոյ Աստուածածնին սահմանադրեալ աղօթքն.

Պ. Այո՛, գիտեմ։

٣٩ س . لماذا

ج . لانه حسبما قال الرسول الايمان بلا افعال مثل الميت

٤٠ س . ما هى افعال الصالحة

ج . الصلاة والصوم والصدقة

٤١ س . اتعرف الصلاة الربانية

ج . نعم اعرف

٤٢ س . قلها كى انظر

ج . ياابانا الذى فى السموات يتقدس اسمك لتاتى ملكوتك لتكن مشيئتك كما فى السما كذلك وعلى الارض خبزنا كفافنا اعطنا اليوم واغفر لنا ما علينا كما نحن نغفر لمن له علينا ولا تدخلنا فى التجاريب لكن نجينا من الشرير . لان لك الملك والقدرة والمجد الى الابد امين

٤٣ س . اتعرف الصلوة المحدودة الى القديسة والدة الاله

ج . نعم اعرف

44. Հ. Ասա ։

Պ. Անկանիմք առաջի քո տիրամայր սուրբ Աստուածածին եւ աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց. եւ աղաչեա զմիածին որդիդ փրկել զմեզ ՚ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց ։

ԴՕԱԹՔ

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՈՑ ԱՆՁԱՆՑ
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ
ԶԻՐ ԱՐԱՐԵԱԼ Ի ՏԵԱՌՆ ՆԵՐ
ՍԵՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի. անեղ եւ անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս ։

Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ անբաժանելի լոյս միանական սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի

٤٤ س . قلها

ج . فلنسجد امامك ايتها ام السيد القديسة والدة الاله ثم نلتمس بتوليتك الخالية من الدنس تشفعي فى نفوسنا واسالى ابنك الوحيد ان ينجينا من التجارب ومن كافة شدايدنا

صلاة لكل ذات نفس مومنة
بالمسيح التى هى منظومة
من القديس مار
نرسيس ريس
احبار الارمن

اعترف لك بالايمان واقبل الارض امامك ايها الاب والابن والروح القدس الطبيعة العديمة الموت وغير مكونة خالق الملايكة والبشر وجميع البرايا . فارحم كافة خليقتك وارحمنى انا كثير الخطايا

اعترف لك بالايمان واقبل الارض امامك ايها النور الغير منفصل "وحدانى ثالوثا" قدوس "ولاهوتا" واحد صانع النور وطارد الظلام فاطرد عن

հալածեա 'ի հոգւոյ իմմէ ըզ-
խաւար մեղաց և անգիտու-
թեան, և լուսաւորեա զմի-
տս իմ 'ի ժամուս յայսմիկ՝
աղօթել քեզ 'ի հաճոյս և ըն-
դունիլ 'ի քէն զխնդրուածս
իմ. և ողոր:

Հայր երկնաւոր Աստուած
ճշմարիտ որ առաքեցեր զոր-
դիդ քո սիրելի 'ի խնդիր մո-
լորեալ ոչխարին. մեղայ յեր-
կինս և առաջի քո. ընկալ զիս
որպէս զանառակ որդին. և
զգեցո ինձ զպատմուճանն զա-
ռաջին զոր մերկացայ մեղօք
և ողոր:

Որդի Աստուծոյ Աստուած
ճշմարիտ. որ խոնարհեցար 'ի
հայրական ծոցոյ՝ և առեր մար-
մին 'ի սրբոյ կուսէն Մարիա-
մայ վասն մերոյ փրկութեան
խաչեցար՝ թաղեցար՝ և յա-
րեար 'ի մեռելոց՝ և համբար-
ձար փառօք առ Հայր. մեղայ
յերկինս և առաջի քո յիշեա
զիս որպէս զաւազակն յոր-
ժամ գաս արքայութեամբ
քով. և ողոր:

Հոգի Աստուծոյ Աստուած
ճշմարիտ. որ իջեր 'ի Յորդա-
նան և 'ի վերնատունն և լու-

روحى ظلم الخطية وعدم المعرفة ونور
عقلى فى هذه الساعة مصليا" اليك
لترضى وانال منك مقاصدى وارحم
كافة الخ

ايها الاب السماوى الاله الحقيقى
الذى ارسلت ابنك الحبيب
لتلتمس الخاروف الضال اخطات
فى السما وقدامك اقبلنى مثل الابن
الشاطر ولبسنى الحلة الاولية التى
تعريت منها بالخطية . وارحم الخ

يا ابن الله الاله الحقيقى الذى
تنازلت من الحضن الابوى واخذت
جسدا من القديسة مريم العذرا ولاجل
خلاصنا صلبت ودفنت وقمت من
بين الاموات وصعدت بالمجد الى
الاب . اخطات فى السما وقدامك
اذكرنى كما اللص عند ما تاتى
بملكوتك . وارحم الخ

ايها الروح القدس الاله الحقيقى
الذى حليت فى الاردن وفى

սաւորեցեր զիս մկրտութբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով. որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և ողոր:

Անեղ բնութիւն. մեղայ քեզ մտօք իմովք հոգւով և մարմնով իմով. մի յիշեր ըզմեղս իմ զառաջինս՝ վասն անուան քում սրբոյ. և ողոր:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց. և գրեա զանուն իմ ՚ի դպրութեան կենաց և ողոր:

Քննող գաղտնեաց մեղայ քեզ կամաւ և ակամայ. գիտութեամբ և անգիտութբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս. ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյ. և ողոր:

Ամենախնամ տէր դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ. ոչ ևս հայիլ յա-

العلية ونورتنى بصبغة المعمودية المقدسة . اخطات فى السما وقدامك فطهرنى ايضا" بنارك الالهية كما طهرت الرسل القديسين بالالسنة النارية وارحم الخ

ايها الطبيعة الغير مخلوقة اخطات اليك بفكرى . بروحى وجسدى . لا تذكر خطاياى السالفة لاجل اسمك القدوس . وارحم الخ

ايها الناظر الجميع اخطات اليك بالفكر بالقول وبالفعل فامحو صك اثمى! واكتب اسمى فى سفر الحياة . وارحم الخ

ايها الفاحص الخفايا اخطات اليك بارادة وبغير ارادة . بمعرفة وبغير معرفة . فانعم بالغفران لى انا الخاطى . لانى منذ مولدى بالمعمودية المقدسة حتى اليوم مخطيا" قدام لاهوتك بحواسى وبجميع اعضاء جسدى وارحم الخ

ايها الرب الكلى الرافة ضع حارسا" لعيناى بخوفك المقدس ليلا ينظران

ըստ. և ականջաց իմոց ոչ ա-
խորժել լսել զբանս չարու-
թեան. և բերանոյ իմոյ ոչ
խօսել զստութիւն. և սրտի
իմոյ ոչ խորհել զչարութիւն
և ձեռաց իմոց ոչ գործել
զանիրաւութիւն. և ոտից ի-
մոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս
անօրէնութեան. այլ ուղղեա
զշարժումն սոցա լինել միշտ
ըստ պատուիրանաց քոց յա-
մենայնի. և ողոր.

Հուր կենդանի Քրիստոս,
զհուր սիրոյ քոյ՝ զոր արկեր
յերկիր. բորբոքեա յանձն
իմ. զի այրեսցէ զաղտ հոգ-
ւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ
մտաց իմոց, և մաքրեսցէ զ-
մեղս մարմնոյ իմոյ, և վառես-
ցէ զլոյս գիտութեան քո ՚ի
սրտի իմում. և ողոր:

Իմաստութիւն Հօր Յի-
սուս տուր ինձ իմաստու-
թիւն զբարիս խորհիլ՝ և խօ-
սիլ՝ և գործել առաջի քո յա-
մենայն ժամ. ՚ի չար խորհր-
դոց ՚ի բանից և ՚ի գործոց փըր-
կեա զիս. և ողոր:

Կամեցող բարեաց տէր կա-
մարար. մի թողուր զիս ՚ի կա-
մս անձին իմոյ գնալ. այլ ա-
ռաջնորդեա ինձ լինել միշտ

بالسو. ولاذناى ليلا يستلذان بسمع
كلام الشرور. ولفمى ليلا يتكلم بالكذب.
ولقلبى ليلا يفكر بالشرور. وليداى ليلا
يصنعان الظلم. ولرجلاى ليلا يسعيان
الى طريق الضلال. بل سهل حراكاتهم
ليكونوا دايما" حسب وصاياك فى
كل شى. وارحم الخ

ايها المسيح النار الحية. اضرم
نار محبتك التى القيتها على الارض
فى نفسى كى تحرق وسخ روحى
وتنقى وساوس ضمايرى وتطهر خطايا
جسدى وتوقد نور معرفتك فى قلبى
وارحم الخ

يا يسوع حكمة الاب هب لى
حكمة كى افكر واتكلم وافعل الصالح
قدامك فى كل حين. ونجينى من
افكار واقوال وافعال الشريرة وارحم الخ

ايها المريد الخيرات الرب الصانع
الارادة. لاتدعنى ان اسير حسب
هوى نفسى. بل اهدنى دايما" اكون

ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր։

Արքայ երկնաւոր տուր ինձ զարքայութիւն քո. զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս և սիրել զքեզ միայն. և առնել զկամս քո. և ողոր։

Խնամող արարածոց պահեա նշանաւ Խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ՝ 'ի պատրանաց մեղաց, 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողոր։

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ և 'ի գիշերի. 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի երբէք սասանեցայց. և ողոր։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմութբ քով քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և ողոր։

Դարձուցիչ մոլորելոց դար-

على حسب هواك الغاوى الخير. وارحم الخ

ايها الملك السماوى امنحنى ملكوتك التى وعدت بها محبتك وقوى قلبى كى ارفض الخطية واحبك انت وحدك وافعل مشيئتك. وارحم الخ

ايها المتحنن على البرايا. احفظ باشارة صليبك روحى وجسدى من اشراك الخطايا. من تجاريب الشيطان. ومن رجال الظالمين. ومن كافة شدايد الروح والجسد. وارحم الخ

ايها المسيح الحافظ الكل. يمينك تظللنى فى النهار والليل. فى جلوسى فى البيت. فى سيرى عاى الطريق. فى رقادى وقيامى. لئلا اتزعزع ابداً. وارحم كافة الخ

يا الهى انت الذى تفتح يدك وتملا كافة الخلايق برحمتك. اليك استودع نفسى. فاذت اهتم وهبنى عوايز روحى وجسدى. من الان والى الابد. وارحم كافة خليقتك وارحمنى انا كثير الخطايا

ايها المهدى الضاللين اردنى من

ձո զիս 'ի չար սովորութենէ իմմէ 'ի բարի սովորութիւն. և բևեռեա 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուան և զերկիւղ գեհենոյն և զսէր արքայութեանն, զի զղջացայց 'ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և ո:

Աղբիւր անմահութեան, աղբերացո 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողոր:

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով. և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր:

Բարերար տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են 'ի ներքոյ երկնից. և ողոր:

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուր.

العادة الشريرة الى عادة الصالحة . واسمر في روحي يوم الموت المرهوب وخوف الجحيم ومحبة الملكوت . كي اندم عن الخطية وافعل البر . وارحم كافة خليقتك الخ

يا ينبوع عدم الممات افض من قلبي دموع التوبة . كمثل الذانية لكي اغسل خطايا نفسي قبل خروجي من هذه الدنيا . وارحم الخ

يا موهب المراحم . هبني ايمانا″ مستقيما″ وافعالا″ صالحة . وبتناول جسدك ودمك المقدسان اذهب اليك . وارحم كافة الخ

ايها الرب الصانع الصالح . فلتسلمني لملاك الصالح كي بسهولة استودع روحي وبغير اضطراب اجوز من بين الشياطين الخبثا الذين هم تحت السما . وارحم كافة الخ

ايها المسيح النور الحقيقي . اجعل روحي مستحقة ان تنظر نور مجدك بالسرور . في يوم الوليمة . واستريح

րըն, և հանգչել յուսով բա-
րեաց յօթեւանս արդարոց
մինչեւ յօր մեծի գալստեան
քո. և ողոր:

Դատաւոր արդար յորժամ
գաս փառօք հօր դատել ըզ
կենդանիս և զմեռեալս. մի
մտաներ ՚ի դատաստան ընդ
ծառայի քում. այլ փրկեա
զիս ՚ի յաւիտենական հրոյն,
և լսելի արա ինձ զերանաւէտ
կոչումն արդարոց յերկնից
արքայութիւնդ. և ողոր:

Ամենողորմ տէր, ողորմեա
ամենայն հաւատացելոց ՚ի
քեզ, իմոց և օտարաց՝ ծա-
նօթից եւ անծանօթից՝ կեն-
դանեաց և մեռելոց. շնոր-
հեա և թշնամեաց իմոց և ա-
տելեաց զթողութիւն՝ որ առ
իս յանցանաց. և դարձո ըզ-
նոսա ՚ի չարեացն, զոր ունին
վասն իմ. զի ողորմութեան
քում արժանի եղիցին. և ո:

Փառաւորեալ տէր, ընկալ
զաղաչանս ծառայիս քո, և կա-
տարեա ՚ի բարի զխնդրուածս
իմ. բարեխօսութեամբ սըր-
բուհւոյ Աստուածածնին, և
Յովհաննու մկրտչին, և սըր-
բոյն Ստեփաննոսի նախավկա-

بالرجا الخيرات فى مساكن الابرار.
الى يوم مجيك العظيم وارحم الخ

ايها الديان العادل . فحين تاتى
بمجد ابيك لتدين الاحيا والاموات
فلا تدخل بالمحاكمة مع عبدك . بل
نجينى من نيران الابدية وسمعنى
دعوة الابرار الطوباوية الى ملكوت
السماوات . وارحم الخ

ايها الرب الكلى الرحمة ارحم
جميع المومنين بك . الاهل والغربا .
المعلومين والغير معلومين . الاحيا
والاموات . وانعم بالغفران لاعداى
ومبغضينى الذين زلو معى . واردهم
عن الشرور التى لهم من اجلى لكى
يستحقون مراحمك . وارحم الخ

ايها الرب الممجد . استجيب
طلبات عبدك . وكمل مقاصدى بالخير
بشفاعة القديسة والدة الاله . ويوحنا
المعمدان . والقديس استفانوس اول

յին. և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. և սրբոց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝ Միանձանց. և ամենայն սրբոց քոց, երկնաւորաց և երկրաւորաց. Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից ամէն.

الشهدا . والقديس غوريغوريوس منورنا . والقديسين الرسل والانبيا والمعلمين والشهدا وروس الابا والسياح والعذارى والمتوحدين وساير قديسيك السماويين والارضيين . ولك المجد والسجود ايها الثالوث الغير منفصل القدوس الى ابد الابدين امين

---

## ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐՔ
## ԱՍԱՑԵԱԼ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ :ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալդ յամենայնի. հօրդ ահաւորի անքննելի ծնունդ։

Որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ։

Որ 'ի ծագել անստուեր նշողից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք, խորտակին շղթայք, կենդանանան մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւք

## صلاة فعالة قالها القديس غريغوريوس النريقى

يا ابن الله الحى يا مباركا" فى الكل يامن اتلادك من ابيك المرهوب غير مدروك

انت الذى لم يعجزك شيـا"

انت الذى عندما تشرق شعاعات مجدك العديمة الظل بالرحمة . فتذوب الخطايا . تخزى الشياطين . تمحى الزلات . تنقطع الرباطات . تتكسر السلاسل . تعيش المايتين .

տեղի տան ախորժութիւնք, նա-
հանգչին հեծութիւնք, փախ-
նու խաւարն, մեկնի մէգն,
մերժի մառախուղն, փարա-
տի մռայլն, ցրուի աղջա-
մուղջն, վերանայ մութն, գը-
նայ գիշերն, տարագրի տագ-
նապն չքանան չարիքն, հալա-
ծին յուսահատութիւնքն, և
Թագաւորէ ձեռն քո ամե-
կար քաւիչդ ամենայնի ։

Որ ոչ եկիր կորուսանել
զմարդկան հոգիս, այլ կեցու-
ցանել ։

Թող ինձ զանթիւ չարիսն
իմ բազում ողորմութեամբդ
զի դու միայն ես յերկինս ան-
ճառ և յերկրի անքննելի. 'ի
ատարր գոյից. և յեզերս ծագաց
աշխարհի ։

Սկիզբն ամենայնի. և յա-
մենայնի. ամենայն լրմամբ
օրհնեալ 'ի բարձունս ։

Եւ քեզ ընդ հօր և հոգ-
ւոյդ սրբոյ վայելէ փառք
յաւիտեանս ամէն ։

تشفى الضربات . تبرى القروح . ترتفع الفسادات . تنصرف الاحذان . تنزاح الكروب . يهرب الظلم . يفسخ الضباب . تبيد الغشاوة . ينجلى القتام . يضمحل الفسق . يكشف الغلس . يذهب الليل . تخمد الحرارة . تتلاشى الشرور . يزول قطع الرجا . وتملك يدك الضابطة الكل ياغافراً للكل

الذى لم اتيت لتهلك انفس البشر بل لتنقذها

فاصفح عن اساياى التى لاتحصى بكثرة رحمتك لانك انت وحدك فى السما غير موصوف وعلى الارض لست بمفحوص . منزهاً عن البرايا . ومحيطاً باقطار العالم

بداية الى الكل . وفى الكل . بكل كمال مسبحاً فى العاى

ولك يليق المجد مع ابيك
وروحك القدوس
الى الابد امين

## ՀԱՆԳԻՍՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:

Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած:

Նոյն ինքն 'ի բնութենէ հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ. ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով:

Որով էառ զմարմին զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս

## دستور الايمان

نومن بالله" واحد اب ضابط الكل . خالق السما والارض . كل ما يرى وما لا يرى

وبرب„ واحد يسوع المسيح ابن الله . المولود من الله ابنا" وحيد . ياعني من جوهر الاب

الاه" من الاه . نور من نور . الاه"حق من الاه" حق . مولود غير مخلوق

وهو من طبيعة الاب . وبهي صار كل شي في السما وعلى الارض المنظورات وغير منظورات

الذي من اجلنا نحن البشر ومن اجل خلاصنا نزل من السما . تجسد . تانس . وولد كاملا" من القديسة مريم البتول . بروح القدس

الذي بهي اخذ الجسد والروح والعقل . وكل ما يختص بالانسان . حقا" من غير شكا"

تعذب . وصلب . وقبر . وقام في اليوم الثالث . صعد الى السما

նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն ՚ի յորդանան. քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, ՚ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց.

Ի յարութիւնն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն. յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ

بذلك الجسد وجلس عن يمين الاب

وايضا" ياتى بذلك الجسد وبمجد الاب ليدين الاحيا والاموات الذى لا فنا لملكه

نومن بروح القدس . كاملا" غير مخلوق . الناطق بالناموس والانبيا والانجيل

الذى نزل بالاردن . وكرز بالمرسول . وسكن بالقديسين

نومن بكنيسة واحدة جامعة مقدسة رسولية. بمعمودية واحدة لندامة الطوبه وغفران الخطايا

وقيامة الموتى . والدينونة الابديه للارواح والاجساد . فى ملكوت السموات . والحياه الابدية

والذى يقولون كان موقتا" . او لم كان حينا" الابن . اوكان موقتا" . او لم كان حينا" روح القدس اوصارو

ասեն լինել զորդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սբ եկեղեցի ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն ։

ՎԵՐՋ

من ماش. او من غير جوهر صار ابن الله. او روح القدس. وان كان غيره او بدله. مثل هولاى تحرمهم الكنيسة المقدسة الرسولية

ونحن نمجد الذى كان قبل الدهور بالسجود للثالوث المقدس واللاهوت واحد. الاب. والابن. وروح القدس. الان والى كل اوان والى دهر الداهرين امين

تم

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144